

Սոցիալական աշխատողների համագործակցությունը հանուն արևելյան գործընկերության երկրներում սոցիալական փոփոխությունների (SWIC)

EuropeAid/135811/DH/ACT/Multi

Ենթադրամաշնորհային ծրագիր

Հարց ու պատասխան

Դիմողներին և նրանց փորձառուությանը վերաբերող հարցեր.

- 1. Ինչպե՞ս է ցանկալի դիմել Ենթադրամաշնորհային ծրագրին՝ որպես կոնսորցիումի անդամ, թե առանձին ՉԿ: Արդյո՞ք կոնսորցիումով դիմող թեկնածուները առավելություն կստանան:**

Համաձայն Ուղեցույցի 2.2 կետի, Ենթադրամաշնորհային ծրագրի «պահանջներին համապատասխանող հայտատուները կարող են դիմել միանձնյա (առանց գործընկերոջ) կամ գործել այլ գործընկերների հետ համատեղ»: Սա նշանակում է, որ առավելություն չի տրվում ինչպես միանձնյա դիմումներին, այնպես էլ կոնսորցիումով դիմումներին: Երկու դեպքում էլ դիմումները գնահատվում են միևնույն եղանակով: Այնուամենայնիվ, նախընտրությունը տրվում է այն դիմումատուներին, ովքեր ներկայացնում են «մայրաքաղաքից դուրս գործող փոքր ՉԿ-ների» (Ուղեցույց Կետ 2.2.1): Եթե մի քանի ՉԿ համաձայնում են հանդես գալ որպես կոնսորցիում, ապա «նրա անդամներից առնվազն մեկը պետք է գրանցված լինի մայրաքաղաքից դուրս (գլխավոր հայտատուն կամ համահայտատուն)» (Ուղեցույց, Կետ 2.2.2): Ընդ որում, հայտադիմումում պետք է հստակորեն նշված լինի յուրաքանչյուր կազմակերպության ներգրավվածության մակարդակը, իսկ Դրամաշնորհի հայտադիմումի 5-րդ կետում՝ յուրաքանչյուր կողմի պարտականությունները: Ի լրումն, պարտականությունների բաժանումը պետք է հստակ արտացոլված լինի նաև Բյուջեում:
- 2. Խնդրում եմ հստակեցրեք, ի՞նչ նկատի ունենք ասելով, որ միջազգային կազմակերպությունները և նրանց տեղական մասնաճյուղերը/ ներկայացուցչությունները չեն կարող դիմել Ենթադրամաշնորհային ծրագրին: Արդյո՞ք կազմակերպությունը կարող է դիմել ծրագրին, եթե տեղական մասնաճյուղերը գրանցված են որպես տեղական ՉԿ-ներ:**

Կազմակերպությունների համապատասխանությանը վերաբերող դրույթները հստակորեն սահմանված են Ուղեցույցի 2.2.1 կետում: Ծրագրին կարող են դիմել միայն այն կազմակերպությունները, որոնք գրանցված են Հայաստանում: Այն բոլոր միջազգային կազմակերպությունները և նրանց տեղական մասնաճյուղերը, որոնք գրանցված չեն որպես տեղական ՉԿ, չեն կարող դիմել այս դրամաշնորհին:
- 3. Արդյո՞ք Գլխավոր հայտատուն կարող է մայրաքաղաքում գրանցված կազմակերպություն լինել:**

Համաձայն Ուղեցույցի 2.2.1 կետի, «հատկապես խրախուսվում է դիմումների ներկայացումը մարզերում գտնվող փոքր ՉԿ-ների կողմից»: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ մայրաքաղաքում գրանցված կազմակերպությունները նույնպես կարող են դիմել այս ծրագրին, եթե նրանց կողմից նախատեսվող միջոցառումները նախատեսվում է իրականացնել «մեկ կամ մի քանի մարզերում միաժամանակ» (Ուղեցույց, կետ 2.3.3):
- 4. Ի՞նչ նկատի ունենք ասելով ծրագրի իրականացման ապացուցելի փորձառություն: Ինչպե՞ս պետք է ապացուցվի փորձառությունը:**

Համաձայն Ուղեցույցի 2.2.1 կետի, Գլխավոր հայտատուն պետք է «վերջին 5 տարիների ընթացքում ունենա դրամաշնորհով պահանջվող գումարի նվազագույնը 33% արժողությամբ առնվազն 2 ծրագրերի իրականացման ապացուցելի փորձառություն Հայաստանում, (նախընտրելի է սոցիալական ոլորտում), որոնցից առնվազն մեկի թիրախում եղել են մարզերը: Նման փորձառության մասին ապացույցներ ներկայացնելու համար անհրաժեշտ է լրացնել Դրամաշնորհային ծրագրի հայտի 9.1 կետի ներքո բերված աղյուսակը:

Համաձայն Ուղեցույցի 2.2.2 կետի, համահայտատուն «պետք է դրամաշնորհի հայտերի ներկայացման ձևաթղթում պարտադիր ապացույցի, որ իրենց աշխատողներից առնվազն 2-ը, ովքեր համահայտատուի կողմից ներգրավված են լինելու աշխատանքների իրականացման գործընթացում, նախկինում ներգրավված են եղել դրամաշնորհային ծրագրերի իրականացման կամ համակարգման գործընթացներում առնվազն 6 ամիս տևողությամբ՝ դրամաշնորհի դիմումի հայտում նշելով աշխատակիցների անունները, ծրագրերի անվանումները, որտեղ նրանք աշխատել են, այդ ծրագրերում նրանց կողմից իրականացրած գործառնությունները, իրականացնող կազմակերպությունների անվանումները, կոնտակտային տվյալները, դոկորների անվանումները և աշխատակիցների ներգրավվածության տևողությունը/ ժամանակահատվածը»: Նման փորձառությունը ապացուցելու համար անհրաժեշտ է լրացնել Դրամաշնորհի հայտի ձևաթղթի կետ 9.2-ի ներքո բերված աղյուսակը:

5. Եթե կազմակերպությունը հիմնադրվել է ընդամենը մեկ տարի առաջ կամ այս տարի և չունի ծրագրերի իրականացման փորձառություն, արդյո՞ք կարող է դիմել Ենթադրամաշնորհային ծրագրին:

Համաձայն Ուղեցույցի 2.2.1 կետի, որպես Գլխավոր հայտատու հանդես գալու համար, կազմակերպությունը պետք է « վերջին 5 տարիների ընթացքում ունենա դրամաշնորհով պահանջվող գումարի նվազագույնը 33% արժողությամբ առնվազն 2 ծրագրերի իրականացման ապացուցելի փորձառություն Հայաստանում, (նախընտրելի է սոցիալական ոլորտում), որոնցից առնվազն մեկի թիրախը եղել է մայրաքաղաքից դուրս գտնվող շրջաններում:

Եթե կազմակերպությունը չունի բավարար փորձառություն ծրագրերի իրականացման, այն կարող է համագործակցել մեկ այլ գլխավոր հայտատուի հետ և դիմել որպես համահայտատու (տե՛ս Ուղեցույց կետ 2.2.2):

6. Ենթադրամաշնորհային ծրագրին կարող են դիմել միայն ՀԿ-ները, թե՛ քաղաքապետարանները ևս դիմելու հնարավորություն ունեն (օրինակ, եթե քաղաքապետարանը Սոցիալական ապահովության բաժին ունի):

Համաձայն Ուղեցույցի 2.2.1 և 2.2.2 կետերի, Դրամաշնորհին կարող են դիմել միայն շահույթ չիետապնդող քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

7. Մեր կազմակերպությունը գործում է մայրաքաղաքում և ունի մի քանի մասնաճյուղեր մարզերում (մասնաճյուղերից մեկը գտնվում է երկրի արևելյան մասում): Մասնաճյուղի կողմից մի քանի ծրագրեր իրականացվել են մարզերում, սակայն այդ ծրագրերը մշակել և դրանց համար դիմել է կենտրոնական կազմակերպությունը: Շարունակելով միևնույն ծառայությունների մատուցումը, մասնաճյուղը մինչև մարտ ամիսը գրանցվելու է որպես անկախ կազմակերպություն, արդյո՞ք այն կարող է դիմել Ենթադրամաշնորհային ծրագրին: Արդյո՞ք նրա կողմից որպես ապացուցելի փորձառություն կարող է ներկայացվել որպես մասնաճյուղ կատարած աշխատանքի փորձառություն:

Համաձայն Ուղեցույցի 2.2.1 կետի, հատկապես խրախուսվում է դիմումների ներկայացումը մարզերում գտնվող փոքր ՀԿ-ների կողմից: Միևնույն ժամանակ նշվում է, որ մայրաքաղաքում գրանցված կազմակերպությունները ևս կարող են դիմել սույն Ենթադրամաշնորհին, եթե ծրագրով առաջարկվող միջոցառումները իրականացվելու են մայրաքաղաքից դուրս գտնվող մեկ կամ մի քանի մարզերում (Ուղեցույց, կետ 2.3.3): Որպեսզի կազմակերպությունը հանդես գա որպես Գլխավոր հայտատու պետք է վերջին 5 տարիների ընթացքում ունենա դրամաշնորհով պահանջվող գումարի նվազագույնը 33% արժողությամբ առնվազն 2 ծրագրերի իրականացման ապացուցելի փորձառություն Հայաստանում, (նախընտրելի է սոցիալական ոլորտում), որոնցից առնվազն մեկի թիրախը եղել է մայրաքաղաքից դուրս գտնվող շրջաններում (Ուղեցույց, կետ 2.2.1):

8. Արդյո՞ք Ենթադրամաշնորհային ծրագրին դիմող Գլխավոր հայտատուն (գրանցված, փորձառու) կարող է դիմել այլ ՀՀԿ-ների ուժեղացնելու ծրագրով, մասնավորապես այն կազմակերպություններին, որոնք դեռևս գործում են ոչ պաշտոնապես:

Համաձայն Ուղեցույցի 2.3.4 և 2.3.5 կետի, որտեղ ներկայացված են Ենթադրամաշնորհի շրջանակներում իրականացվող գործողություններին ներկայացվող պահանջները, նշվում է, որ ծրագրերն անպայմանորեն պետք ունենան ընտանիքի ամրապնդման և սոցիալական աշխատանքի բաղադրիչ, միևնույն ժամանակ 2.3.6 կետում նշված են գործողությունների իրականացման սահմանափակումները, հետևաբար կարևորագույն պայմանն այն է, որ Ձեր կողմից առաջարկվող ծրագրերը համապատասխանեն նշված կետերի պահանջներին: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ այս Ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում որպես Գլխավոր հայտատու և համահայտատու կարող են դիմել միայն գրանցված կազմակերպությունները (Ուղեցույց, կետ 2.2.1, 2.2.2):

9. Արդյո՞ք Ենթադրամաշնորհային հայտին կից փաստաթղթերում պետք է նաև Ծրագրի անձնակազմի անդամների ինքնակենսագրականները (CV) (անձնական տեղեկատվություն և աշխատանքային փորձառությունը) ներկայացվեն:

Առանձին ինքնակենսագրականների ներկայացման անհրաժեշտությունն չկա, պետք է միայն լրացնել Ենթադրամաշնորհային հայտի ձևաթղթի 9.2 կետի աղյուսակները:

10. Հայտատու կազմակերպությունը պետք է փաստաթղթերի հետ ներկայացնի նաև իր Գրանցման վկայականի պատճենը: Սակայն մի հարց, Գրանցման վկայական ասելով նկատի ունենք այն, որը տրվել է կազմակերպությանը հիմնադրման պահին, թե՞ պետք է ներկայացվի քաղվածք ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից, որտեղ նշված են նաև վերջերս կատարված բոլոր փոփոխությունները: Ո՞րն է անհրաժեշտ ներկայացնել:

Եթե առաջին գրանցումից հետո փոփոխություններ են արվել, ապա խնդրում ենք ներկայացնել քաղվածք ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից:

11. Վերջին 5 տարիներին իրականացված մեկ ծրագրի արժեքը պետք է կազմի պահանջվող բյուջեի 33%-ը, թե երկու ծրագրերի արժեքը միասին:

Համաձայն Ուղեցույցի 2.2.1 կետի, դիմող կազմակերպությունը պետք է հանրապետությունում վերջին հինգ տարիների ընթացքում առնվազն երկու ծրագրի իրականացման փորձառություն ունենա, ընդ որում, ցանկալի է, որ դրանք իրականացված լինեն սոցիալական ոլորտում, իսկ դրանցից առնվազն մեկը՝ մեկ կամ մի քանի մարզում: Պետք է նկատի ունենալ, որ իրականացված երկու ծրագրերից յուրաքանչյուրի արժեքը պետք է կազմի պահանջվող գումարի առնվազն 33%-ը:

12. Արդյո՞ք 33%-ի պահանջը հավասարապես վերաբերվում է և՛ Գլխավոր հայտատուին, և՛ համահայտատուին: Եվ երկրորդ, արդյո՞ք այն պետք է կազմվի մեկ ծրագրից, թե բոլոր ծրագրերից:

Համաձայն, Ուղեցույցի 2.2.1 կետի, հայտատուն կարող է հանդես գալ որպես գլխավոր հայտատու, եթե «վերջին 5 տարիների ընթացքում իրականացրել է դրամաշնորհով պահանջվող գումարի նվազագույնը 33% արժողությամբ առնվազն 2 ծրագրեր Հայաստանում՝ ապացուցելի փորձառությամբ, (նախընտրելի է սոցիալական ոլորտում), ընդ որում որոնցից առնվազն մեկի թիրախը եղել է մայրաքաղաքից դուրս գտնվող շրջաններում»: Սա նշանակում է, որ Գլխավոր հայտատուի կողմից ներկայացվող երկու ծրագրից յուրաքանչյուրի բյուջեն պետք է կազմի պահանջվող գումարի առնվազն 33%-ը:

Համաձայն, Ուղեցույցի 2.2.2 կետի, «համահայտատուները կարող են բայց պարտադիր չէ, որ ներկայացնեն հաջողությամբ իրականացված ծրագրի ապացույցներ»: Սա նշանակում է, որ համահայտատուն պարտավոր չէ ներկայացնել ապացույցներ իրականացված ծրագրերի մասին: Այնուամենայնիվ, եթե կազմակերպությունը որոշում է ներկայացնել իր կողմից իրականացված ծրագրերը՝ Հայտի 9.2 կետում, ապա այս ծրագրերի բյուջեի նկատմամբ սահմանափակումներ չեն ներկայացվում:

Այնուամենայնիվ, համաձայն Ուղեցույցի 2.2.2 կետի, համահայտատուն պետք է ներկայացնի ապացույցներ, «որ իր աշխատողներից առնվազն 2-ը, ովքեր համահայտատուի կողմից ներգրավված են լինելու աշխատանքների իրականացման գործընթացում, նախկինում ներգրավված են եղել դրամաշնորհային ծրագրերի իրականացման կամ համակարգման գործընթացներում առնվազն 6 ամիս տևողությամբ՝ դրամաշնորհի դիմումի հայտում նշելով աշխատակիցների անունները, այն ծրագրերի անվանումները, որտեղ նրանք աշխատել են, այդ ծրագրերում նրանց կողմից իրականացված գործառնությունները, իրականացնող կազմակերպությունների անվանումները, կոնտակտային տվյալները, դոնորների

անվանումները և նրանց ներգրավվածության տևողությունը»: Այս տվյալները պետք է լրացվեն Հայտի 9.2 կետում:

13. Արդյո՞ք համահայտատուն ևս պետք է նախկինում երկու ծրագիր իրականացրած լինի:
Այնուամենայնիվ, համաձայն Ուղեցույցի 2.2.2 կետի, համահայտատուն պետք է ներկայացնի ապացույցներ, «որ իր աշխատողներից առնվազն 2-ը, ովքեր համահայտատուի կողմից ներգրավված են լինելու աշխատանքների իրականացման գործընթացում, նախկինում ներգրավված են եղել դրամաշնորհային ծրագրերի իրականացման կամ համակարգման գործընթացներում առնվազն 6 ամիս տևողությամբ՝ դրամաշնորհի դիմումի հայտում նշելով աշխատակիցների անունները, այն ծրագրերի անվանումները, որտեղ նրանք աշխատել են, այդ ծրագրերում նրանց կողմից իրականացված գործառնությունները, իրականացնող կազմակերպությունների անվանումները, կոնտակտային տվյալները, դոնորների անվանումները և նրանց ներգրավվածության տևողությունը»: Այս տվյալները պետք է լրացվեն Հայտի 9.2 կետում:

14. Եթե կազմակերպությունը որպես համահայտատու հանդես է եկել մեկ այլ ծրագրում, որտեղ սակայն ինքը չի իրականացրել ֆինանսների կառավարումը, արդյո՞ք կարող է դիմել Ենթադրամաշնորհի համար:
Եթե կազմակերպությունը կարող է ցույց տալ, որ իր կողմից կառավարվել է ծրագրի բյուջեի միայն մի մասը, որը կազմում է պահանջվող գումարի առնվազն 33%-ը, այդ դեպքում հայտը կընդունվի որպես պայմաններին համապատասխանող:
Այն դեպքերում, երբ կազմակերպությունը չունի ծրագրերի իրականացման բավարար փորձառություն, այն կարող է դիմել որպես համահայտատու և համագործակցել մեկ այլ Գլխավոր հայտատուի հետ (Տե՛ս Ուղեցույց, կետ 2.2.2):

15. Եթե կազմակերպությունը վերջերս է հիմնադրվել և դեռևս չունի ծրագրերի իրականացման փորձառություն, միևնույն ժամանակ նրա ղեկավարը ունի ծրագրերի կառավարման ապացույցելի փորձառություն, արդյո՞ք այս կազմակերպությունը կարող է դիմել որպես Գլխավոր հայտատու:
Համաձայն Ուղեցույցի 2.2.1 կետի, որպես գլխավոր հայտատու կարող է հանդես գալ այն կազմակերպությունը, որն «առնվազն 2 ծրագրերի իրականացման ապացույցելի փորձառություն» ունի: Սա նշանակում է, որ հայտին կարող են դիմել միայն կազմակերպությունները և, ոչ թե անձիք:
Եթե կազմակերպությունը չունի բավարար փորձառություն, սակայն ունի փորձառու անձնակազմ, այն կարող է համագործակցել պահանջներին համապատասխանող Գլխավոր հայտատուի հետ և դիմել որպես համահայտատու (Տե՛ս Ուղեցույց, կետ 2.2.2):

Ծրագրի թեմատիկ շրջանակին, թույլատրելի ծրագրային առաջարկներին և ակնկալվող արդյունքներին վերաբերող հարցեր.

16. Եթե ծրագրի հայտատուն ընտրում է Ուղեցույցի 2.3.5 կետի Գ ենթակետում նշված գործողությունը, արդյո՞ք դա նշանակում է, որ նա պետք է ընտրի նաև Ա և Բ ենթակետերը, թե հայտատուն կարող է օգտագործել նաև այլ հետազոտությունների, ուսումնասիրությունների արդյունքներն ու դրանց հիման վրա մշակված հայեցակարգերը:
Կարիք չկա իրականացնելու 2.3.5 կետում նշված բոլոր գործողությունները ըստ բերված հերթականության: Իհարկե, վերջերս իրականացված հետազոտությունների արդյունքներն ու մշակված հայեցակարգերը կարող են օգտագործվել: Պետք է նկատի ունենալ, որ արդեն իրականացված գործողությունները չեն կարող ներկայացվել ծրագրային առաջարկում:
Այնուամենայնիվ, հարթող հայտում ներկայացված ծրագիրը պետք է ներառի ցանկում նշված գործողություններից առնվազն երկուսը: Միայն մեկ գործողություն ընտրելը չի կարող բավարար լինել: Ավելին, համաձայն կետ 2.3.5-ի «ընտրված յուրաքանչյուր գործողության համար, հայտատուները պետք է պարտադիր ներառեն սոցիալական աշխատանքի բաղադրիչը»:
Այն հայտատուները, ում կողմից ներկայացվող հայտը պարունակում է պիլոտային ծառայության բաղադրիչ, ապա պետք է ներկայացվեն նաև բավարար հիմքեր դրա իրականացման համար: Մասնավորապես, պատասխանելով այն հարցին, թե ինչո՞ւ է ընտրվել պիլոտային ծառայության հենց այդ հայեցակարգը: Բավարար հիմքերը կարող են մշակվել թե

ծրագրի իրականացման ընթացքում (ուսումնասիրություններ, հայեցակարգերի մշակում), թե հղում անելով արդեն իրականացված ծրագրերի, որոնք առաջարկվող ծրագրի շրջանակից դուրս են և, որոնց հիմնական բացահայտումները ներկայացված են Ենթադրամաշնորհի հայտում (Կետ 3):

17. Արդյո՞ք հնարավոր է իրականացնել հետազոտություն և, ըստ այդմ, առաջարկություններ անել: Արդյո՞ք հնարավոր է ծրագիրը մշակել միայն այս երկու բաղադրիչների շուրջ:

Հայտատուները ազատ են ընտրելու 2.3.5 կետի ներքո բերված գործողություններից ցանկացած երկուսը: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր ընտրված գործողություն պետք է ներառի սոցիալական աշխատանքի բաղադրիչ, մասնավորապես, վերլուծելով սոցիալական աշխատանքի տեսանկյունից կարևոր հարցերը ընտանիքի ամրապնդման և պաշտպանության կամ բարելավված միջոսեկտորային համագործակցության համատեքստում՝ ներկայացնելով, թե սոցիալական աշխատանքը ինչպե՞ս է կարող նպաստել վերը նշված ոլորտներում բարելավումներին:

18. Արդյո՞ք նախընտրելի է ծրագրի թիրախում ունենալ կոնկրետ սոցիալական հիմնախնդիր, ինչպես օրինակ՝ ընտանեկան բռնությունը և երեխաների նկատմամբ բռնությունը կոնկրետ համայնքներում, և գործողություններն ուղղել ընտանիքի ամրապնդմանը այդ համատեքստում: Սա նշանակում է աջակցել խոցելի ընտանիքներին ուղղակիորեն համայնքային մակարդակում:

Հաղթող հայտատուն, պետք է հստակ նկարագրի միևնույն ծրագրային իրավիճակը թիրախ շրջաններում/համայնքներում, մասնավորապես սահմանի հիմնախնդիրները, մշակի տրամաբանորեն միմյանց կապակցված և հերթական գործողությունների պլան (առնվազն երկու գործողություն 2.3 կետի ցանկից), որը կարող է համապատասխանորեն արձագանքել սահմանված կոնկրետ հիմնախնդրին և, որը կապահովի ծրագրի նախագծի ամբողջականությունը, շարունակականությունը և ծրագրային արդյունքների կայունությունը: Պայմանավորված այն հանգամանքով, թե ո՞րն է սահմանված հիմնախնդիրը և ո՞րն է ընտրված մոտեցումը, գործողությունները պետք է փոփոխություն բերեն մեկ կամ մի քանի քաղաքականության և ազդեցության ընտրված մակարդակներում և գործընթացում ներգրավեն տարբեր շահագրգիռ կողմերի: Ընդ որում, այս ամենը պետք է պատշաճ կերպով ներկայացվի և հիմնավորվի Դրամաշնորհի հայտում:

19. Արդյո՞ք այս ծրագրի շրջանակներում «պիլոտային ծառայությունը» գործողությունների պարտադիր բաղադրիչ է:

Ոչ, պիլոտային ծառայությունը պարտադիր գործողություն չէ (Ուղեցույց, կետ 2.3.5, ենթակետ Գ): Հայտատուները ազատ են ընտրել 2.3.5 կետի ներքո նշված գործողություններից ցանկացած երկուսը: Այնուամենայնիվ, եթե հայտատուն որոշում է գնալ հայեցակարգերի պրակտիկայում ներդրման կամ փորձարկման ճանապարհով, ապա ծրագրում պարտադիր կերպով պետք է ներգրավված լինի սոցիալական աշխատանքի մասնագիտական կրթություն ունեցող սոցիալական աշխատող՝ որպես խորհրդատու կամ պրակտիկ գործունեություն ծավալող մասնագետ: Միակ պարտադիր կիրառման պայմանը սոցիալական աշխատանքի բաղադրիչի ներառումն է, մասնավորապես, վերլուծելով սոցիալական աշխատանքի տեսանկյունից կարևոր հարցերը ընտանիքի ամրապնդման և պաշտպանության կամ բարելավված միջոսեկտորային համագործակցության համատեքստում՝ ներկայացնելով, թե սոցիալական աշխատանքը ինչպե՞ս է կարող նպաստել վերը նշված ոլորտներում բարելավումներին, յուրաքանչյուր ընտրված գործողության շրջանակում:

20. Խնդրում եմ հստակեցնել, թե ի՞նչ նկատի ունենք ասելով «Սոցիալական աշխատանքի բաղադրիչ»:

Համաձայն 2.3.5 կետի, «Ընտրված յուրաքանչյուր գործողության համար, հայտատուները պետք է պարտադիր ներառեն սոցիալական աշխատանքի բաղադրիչը, օրինակ՝ ընտանիքի պահպանման, ամրապնդման կամ բարելավված միջգերատեսչական համագործակցության կոնտեքստում վերլուծելով սոցիալական աշխատանքին հատուկ խնդիրներ՝ ցույց տալով, թե սոցիալական աշխատանքն ինչպես կարող է նպաստել վերոնշյալ ոլորտների կատարելագործմանը»:

21. Արդյո՞ք տեղական և պետական կառույցների հետ համագործակցությունը այս ծրագրի շրջանակներում պարտադիր պայման է:

Հայտատուները ազատ են ընտրելու Ուղեցույցի 2.3.5 կետում Ենթադրամաշնորհի կողմից սատարվող գործողությունների ցանկում նշված գործողություններից ցանկացած երկուսը: Մասնավորապես, Ե և Չ ենթակետերն ամբողջությամբ անդրադառնում են միջկազմակերպական և միջսեկտորային համագործակցությանը: Սակայն, եթե անգամ հայտատուն չի ընտրել վերը նշված ենթակետերից և ոչ մեկը, միևնույն ժամանակ չի նախատեսում այնպիսի գործողությունների իրականացում, որոնք ենթադրում են միջկազմակերպական համագործակցություն, հայտատուի կողմից պետք է պլանավորվեն այնպիսի գործողություններ, որոնք նախատեսում են խորհրդատվությունների տրամադրում և համագործակցություն շահագրգիռ կողմերի հետ (տեղական կառավարման մարմիններ, պետական կառույցներ)³ ապահովելու պլանավորված գործողությունների կայունության բարձրացումը: Հաղթող հայտատուները իրենց ենթադրամաշնորհային հայտում անպայմանորեն պետք է ներկայացնեն, թե ինչպե՞ս են նախատեսում իրականացնել շահագրգիռ կողմերի ներգրավումը ծրագրում:

22. Արդյո՞ք ծրագիրը կարող է իրականացվել մայրաքաղաքում, սակայն սպասարկել մարզերի բնակչությանը:

Համաձայն Ուղեցույցի 2.3.3 կետի, «Աշխատանքները պետք է իրականացվեն Երևանի տարածքից դուրս մեկ կամ մի քանի մարզերում/համայնքներում»: Սա նշանակում է, որ ծառայությունները պետք է գործեն մարզերում:

23. Արդյո՞ք ծրագիրը կարող է իրականացվել միայն մեկ համայնքում:

Համաձայն ուղեցույցի 2.3.3 կետի, «Աշխատանքները պետք է իրականացվեն Երևանի տարածքից դուրս մեկ կամ մի քանի մարզերում»: Եթե ծրագիրն իրականացվում է մեկ կամ մի քանի համայնքներում, ոչ ամբողջ տարածաշրջանում/մարզում, հայտատուն պետք է հստակ մատնանշի, թե ինչպես է ապահովվելու ծրագրի ծախսարդյունավետությունը (այդ թվում թիրախ բնակչության թվաքանակն ու շահառուների վերջնական թիվը):

Ենթադրամաշնորհային ծրագրի բյուջեին և թույլատրելի ծախսերին վերաբերող հարցեր.

24. Արդյո՞ք հայտատու կազմակերպությունը կարող է ծառայությունների մատուցման պայմանագիր կնքել հետազոտական կազմակերպության հետ (հայտատու կազմակերպությունը նախատեսում է հետազոտություն իրականացնել կոնկրետ հիմնախնդրի վերաբերյալ, սակայն չունի համապատասխան փորձառություն):

Համաձայն Ուղեցույցի 2.5.1 կետի, Դ ենթակետի Բ կետի «արտաքին ազգային փորձագետները» համարվում են ընդունելի ուղղակի ծախսերի: Հետազոտական կազմակերպությունների հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրերը համապատասխանում են այս ծախսային հոդվածին:

25. Արդյո՞ք հայտատու կազմակերպությունը կարող է պայմանագիր կնքել Պետական սոցիալական ծառայությունների աշխատակիցների հետ (նրանց վարձել որպես խորհրդատու կամ փորձագետ): Պետական սոցիալական ծառայությունը հանրային իրավաբանական միավոր է:

Համաձայն Ուղեցույցի 2.5.2 կետի «պետության ներկայացուցիչների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներին վարձատրելը» արգելված ծախս է: Կյնուամենայնիվ, եթե անձը վարձվել է որպես արտաքին Սոցիալական աշխատանքի փորձագետ ծրագրում իր ներդրման համար և, եթե սոցիալական ծառայության անձնակազմի անդամը իր հիմնական աշխատանքին զուգահեռ, համաձայն տեղական աշխատանքային օրենսդրությանը, նաև ծառայությունների մատուցման կամ նմանատիպ պայմանագրեր ստորագրելու/կնքելու իրավունքն ունի, ապա կոնկրետ անձին վարձելը՝ որպես խորհրդատու, թույլատրելի է:

26. Արդյո՞ք քաղաքապետարաններում աշխատող սոցիալական աշխատողները կարող են ներգրավվել ծրագրում որպես փորձագետներ:

Համաձայն Ուղեցույցի 2.5.2 կետի «պետության ներկայացուցիչների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներին վարձատրելը» արգելված ծախս է: Կյնուամենայնիվ, եթե անձը վարձվել է որպես արտաքին Սոցիալական աշխատանքի

փորձագետ ծրագրում իր ներդրման համար և, եթե քաղաքացիությանի անձնակազմի անդամը իր հիմնական աշխատանքին զուգահեռ, համաձայն տեղական աշխատանքային օրենսդրությանը, նաև ծառայությունների մատուցման կամ նմանատիպ պայմանագրեր ստորագրելու/կնքելու իրավունքն ունի, ապա կոնկրետ անձին վարձելը՝ որպես փորձագետ, թույլատրելի է:

27. Արդյո՞ք քաղաքացիական ծառայողները կարող են ներգրավվել ծրագրում ներգրավվել որպես փորձագետներ:

Համաձայն Ուղեցույցի 2.5.2 կետի «պետության ներկայացուցիչների և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներին վարձատրելը» արգելված ծախս է: Այնուամենայնիվ, եթե անձը վարձվել է որպես արտաքին Սոցիալական աշխատանքի փորձագետ ծրագրում իր ներդրման համար և, եթե քաղաքացիական ծառայողը իր հիմնական աշխատանքին զուգահեռ, համաձայն տեղական աշխատանքային օրենսդրությանը, նաև ծառայությունների մատուցման կամ նմանատիպ պայմանագրեր ստորագրելու/կնքելու իրավունքն ունի, ապա կոնկրետ անձին վարձելը՝ որպես փորձագետ, թույլատրելի է:

28. Ուղեցույցում որպես թույլատրելի ծախս նշված է նաև կահույքը, արդյո՞ք կահույք ասելով նկատի ունենք միայն գրասենյակային կահույք, թե կարող է լինել նաև այլ, օրինակ՝ մահճակալ:

Սկզբունքորեն, թույլատրելի է ցանկացած կահույքի ձեռքբերումը, որն ուղղակիորեն կապված է պլանավորված գործողությունների հետ, բացատրված է դրա ձեռք բերման անհրաժեշտությունը և ներկայացված են հիմնավորումները, ինչպես նաև կատարված ծախսերը հավասարակշռված են բյուջեի ընդհանուր ծախսերում: Կահույքի տեսակը հիմնականում պայմանավորված կլինի ծրագրի և առաջարկվող ծառայությունների բնույթով: Օրինակ, եթե ծրագրով նախատեսվում է պիլոտային ծառայության իրականացում (օրինակ՝ ցերեկային կենտրոն) և դրա շրջանակներում օրինակ՝ երեխաների մահճակալների կարիք կա, որը լավ հիմնավորված է, ապա նման ծախսը թույլատրելի է, եթե իհարկե ծրագրային բյուջեի մեծ մասը չէ, որ ուղղվում է մահճակալների ձեռքբերմանը:

29. Արդյո՞ք թույլատրելի են խոցելի բնակչության համար նախատեսված կենտրոնների վերանորոգման/վերազինման ծախսերը, օրինակ սարքավորումների, կահույքի ձեռք բերում: Օրինակ, այն կարո՞ղ է նախատեսել կահույքի և սարքավորումների տրամադրում ցերեկային կենտրոնին, որպեսզի այն կարողանա սոցիալական աշխատանքի ծառայություններ մատուցել իր շահառուներին:

Սկզբունքորեն, թույլատրելի է ցանկացած կահույքի ձեռքբերումը, որն ուղղակիորեն կապված է պլանավորված գործողությունների հետ, բացատրված է դրա ձեռք բերման անհրաժեշտությունը և ներկայացված են հիմնավորումները, ինչպես նաև կատարված ծախսերը հավասարակշռված են բյուջեի ընդհանուր ծախսերում: Կահույքի տեսակը հիմնականում պայմանավորված է ծրագրի և առաջարկվող ծառայությունների բնույթով: Օրինակ, եթե ծրագրով նախատեսվում է պիլոտային ծառայության իրականացում (օրինակ՝ ցերեկային կենտրոն) և դրա շրջանակներում օրինակ՝ երեխաների մահճակալների կարիք կա, որը լավ հիմնավորված է, ապա նման ծախսը թույլատրելի է, եթե իհարկե ծրագրային բյուջեի մեծ մասը չէ, որ ուղղվում է մահճակալների ձեռքբերմանը:

30. Արդյո՞ք գոյություն ունի աշխատավարձերի կամ այլ բյուջետային ծախսերի սահմանափակում:

Ծրագրով նախատեսված չէ որևէ սահմանափակում կապված ծրագրի անձնակազմի անդամների հետ, սակայն անձնակազմի թվում ներկայացված յուրաքանչյուր անդամ, պետք է հստակ, ուղղակիորեն առնչվի ծրագրի իրականացմանը, միայն անհրաժեշտ է բյուջեում հիմնավորել, ինչպես նաև ներկայացնել անձնակազմի յուրաքանչյուր անդամի հստակ դերը, որը պետք է նաև գնահատման առարկա դառնա: Պետք է միայն հաշվի առնել, որ նախատեսվող ծախսերը պետք է լինեն ծախսարդյունավետության տեսանկյունից արդարացված:

31. Պահանջվող գումարի ո՞ր մասն են կարող կազմել աշխատավարձերը:
Տե՛ս Հարց 31.

32. Արդյո՞ք դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կարող են միջազգային փորձագետներ հրավիրվել:

Համաձայն Ուղեցույցի 2.5.1 կետի, կարող են հրավիրվել միայն արտաքին ազգային փորձագետներ:

33. Արդյո՞ք գրասենյակային տարածքի վարձակալությունը համարվում է թույլատրելի ծախս: Եթե այո, ապա բյուջեի ո՞ր մասում է պետք այն ներկայացնել:

Այո, գրասենյակային տարածքի վարձույթը համարվում է թույլատրելի ծախս, եթե ուղղակիորեն կապված է առաջարկվող ծրագրի հետ:

Այնուամենայնիվ, գրասենյակային տարածքի վարձույթը համարվում է թույլատրելի անուղղակի ծախս, որը բյուջեում առանձին տողով նշելու կարիք չկա:

Համաձայն Ուղեցույցի 2.5.1 կետին «Անուղղակի ծախսերը վերաբերում են հետևյալին. աշխատանքների կառավարման վերադիր ծախսեր, ինչպիսիք են ծրագրի գրասենյակի վարձակալություն, էլեկտրականության/ջեռուցման և պահպանման, ինչպես նաև կոմունիկացիայի (հեռախոս/բջջայիններ/ինտերնետ) ծախսեր, բանկային վճարներ ու ֆինանսական ծառայություններ, գրասենյակային պարագաներ և այլն: Անուղղակի ծախսերը, որոնք առաջացել են աշխատանքների իրականացման ընթացքում կծածկվեն ֆիքսված տոկոսադրույքով: Գործողության իրականացման համար կատարվող անուղղակի ծախսերը պետք է ամրագրվեն հաստատված տոկոսադրույքով (այսինքն՝ կիրառելով ընդունելի ուղղակի ծախսերի նկատմամբ ամրագրված տոկոսադրույքով, սակայն ընդհանուր գումարը չպետք է գերազանցի ընդունելի ուղղակի ծախսերի 7 %-ը): Հայտատուն պետք է հիմնավորի պահանջվող տոկոսի չափը մինչ պայմանագրի ստորագրումը: Այնուամենայնիվ, դրամաշնորհային պայմանագրում տոկոսադրույքի ֆիքսումից հետո, հիմնավորող փաստաթղթերի ներկայացման կարիք այլևս չի լինի»:

34. Արդյո՞ք սոցիալական ձեռնարկատիրություն ենթադրող գործողությունները (նպատակ ունենալով նպաստել կազմակերպության կայունությանը) համարվում են թույլատրելի ծախսեր:

Սկզբունքորեն, ծրագրի կայունության ապահովմանն ուղղված ծախսերը համարվում են թույլատրելի:

35. Բյուջեի ինչպիսի՞ մասնաբաժին պետք է ունենան գլխավոր հայտատուն և համահայտատուն:

Հայտատուներն իրենք են որոշումներ կայացնում ծրագրում յուրաքանչյուրի ներգրավվածության աստիճանի, պարտականությունների ծավալի, հետևաբար նաև բյուջեի մասնաբաժնի վերաբերյալ: Բյուջեի մասնաբաժնի վերաբերյալ որոշումը թողնված է հայտատուներին: Սակայն, խնդրում ենք հաշվի առնել, որ ծրագրի բոլոր գործընկերները պետք է ծրագրի իրականացման մեջ իրատեսական դերեր ունենան, ընդ որում՝ յուրաքանչյուր կազմակերպության ներդրումների հիմնավորումները պետք է հստակորեն ներկայացված լինեն Հայտում, իսկ պարտականությունների բաժանումը՝ Ենթադրամաշնորհի հայտի ձևաթղթի 5-րդ կետում: Ավելին, պարտականությունների բաժանումը պետք է արտացոլված լինի նաև Բյուջեում:

36. Արդյո՞ք ենթադրամաշնորհները ազատված կլինեն ԱԱՀ-ից:

Մինչ Փոքր դրամաշնորհային ծրագրերի իրականացումը, Սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիան դիմում կներկայացնի ենթադրամաշնորհների ծրագրային ծախսերը ԱԱՀ-ից ազատելու համար:

37. Արդյո՞ք բարեգործական ծրագրերը (օրինակ՝ բնակարանների կառուցում անապահով ընտանիքների համար) այս ենթադրամաշնորհի շրջանակում համարվում են թույլատրելի ծախս:

Այս դրամաշնորհի նպատակն է նպաստել սոցիալական ծառայությունների զարգացմանը համայնքային մակարդակում՝ ներդնելով/զարգացնելով սոցիալական աշխատանքի և միջսեկտորային/ միջակազմակերպական համագործակցության բաղադրիչները:

Հաղթող հայտատուները պետք է կարողանան ցույց տալ տարբեր, միմյանց հետ կապված գործողությունների տրամաբանական և հաջորդական կապը, որոնց իրականացումը կհանգեցնի՝ ծրագրի կայուն արդյունքների: Ուստի այն գործողությունները, որոնք կենթադրեն միայն շինարարություն, հումանիտար օգնություն, զուտ բարեգործություն, այսինքն մեկանգամյա գործողություններ, չեն կարող համարվել թույլատրելի ծախս:



Թույլատրելի գործողությունների ցանկը կարող եք տեսնել Դրամաշնորհի Ուղեցույցի 2.3.5 կետում:

38. Արդյո՞ք կազմակերպությունը կարող է ֆինանսական աջակցություն տրամադրել խոցելի ընտանիքներին:
ՏԵՍ Հարց 37.

Ծրագրի կառավարմանը, կազմակերպչական կառուցվածքին և փոքր դրամաշնորհային ծրագրերի գնահատման ու ընտրության գործընթացին վերաբերող հարցեր.

39. Մեր կազմակերպությունը ծառայություններ է մատուցում պետական սոցիալական ծառայություններից ուղղորդված շահառուների: Ծրագրի իրականացման ընթացքում շահառուների հայտնաբերման նպատակով մենք պետք է համագործակցենք պետական սոցիալական ծառայության հետ: Արդյո՞ք հայտի հետ ներկայացվող փաստաթղթերին կից պետք է ներկայացնել նաև ծառայության հետ կնքված համաձայնագիր, թե դա անհրաժեշտ կլինի ներկայացնել այն դեպքում, եթե ծրագիրը հաղթի: Նույնը վերաբերում է նաև Հուշագրին:

Հայտի համար, բավարար կլինի պետական սոցիալական ծառայությունների հետ աշխատանքի նախորդ փորձի և համագործակցության նկարագրությունը՝ Հայտի ձևաթղթի 4.5 և 5 կետերում: Այս փուլում համագործակցության վերաբերյալ որևէ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտություն չկա: Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ պետական սոցիալական ծառայության հետ համագործակցությունը պետք է ուղղակիորեն կապված լինի ծրագրում նախատեսված գործողությունների իրականացման հետ: Համագործակցության վերաբերյալ փաստաթղթի կարիք կլինի միայն ենթադրամաշնորհի պայմանագրի կնքման ժամանակ:

40. Հայտը լրացնելու ընթացքում, արդյո՞ք պետք է պահպանել, թե ջնջել փակագծերում նշված ուղղորդումները (օրինակ այն մասին, թե ինչ է նշանակում ծրագրի կայունություն), քանի որ այն լրացուցիչ տեղ է զբաղեցնում Հայտի ձևաթղթում:

Այո, ենթադրամաշնորհի հայտում բերված ուղղորդումները կարող եք ջնջել: Այնուամենայնիվ, խնդրում ենք ուշադիր լինել և Հայտում ներկայացնել ողջ պահանջվող տեղեկատվությունը:

41. Հարցը վերաբերվում է տառատեսակին: Եթե հայտը գրված է հայերենով, ապա տառատեսակը չի կարող լինել Arial, ինչպես անգլերենի դեպքում է: Ինչպե՞ս է ստուգվելու տառատեսակը (հիմնականում հայերենի դեպքում օգտագործվում է Sylfaen տառատեսակը):

Հայերեն լեզվով ներկայացվող հայտերի դեպքում ընդունելի է նաև այս տարբերակը. տառատեսակը՝ Sylfaen, տառաչափը՝ 10, լուսանցքերը՝ 2 սմ, տողերի հեռավորություն՝ մեկ:

42. Ծրագրի Ամփոփագիրը պետք է գրված լինի միաժամանակ և անգլերեն, և հայերեն լեզուներով, թե՛ միայն մեկ լեզվով:

Եթե հայտը ներկայացված է հայերեն, ապա Ամփոփագիրը պետք է ներկայացվի անգլերեն: Եթե Հայտի լեզուն անգլերեն է, ապա Ամփոփագիրը պետք է ներկայացվի հայերեն լեզվով:

43. Եթե Հայտը գրված է հայերենով, արդյո՞ք Ամփոփագիրը ևս պետք է գրվի հայերենով, թե այն պետք է ներկայացվի անգլերեն լեզվով:

Եթե Հայտը ներկայացված է հայերենով, ապա Ամփոփագիրը պետք է ներկայացվի անգլերենով:

44. Ինչպիսի՞ն են հաշվետվությունների ներկայացման պահանջները խմբային դիմումների դեպքում:

Փոքր դրամաշնորհների ծրագրի ֆինանսական միջոցները ուղղակիորեն փոխանցվելու են գլխավոր հայտատուին: Ուստի գլխավոր հայտատուն է պատասխանատվություն կրում Դոնորին հաշվետվություններ ներկայացնելու համար, թե ֆինանսական, թե բովանդակային: